

մուծելով սուտ աստուածներու պաշտամունքը: Բայց Ս. Հեղինէ և Կոստանդիանոս ըրին զայն քրիստոնէութեան ամենէն նշանաւոր սրբավայրը: Այն ատենէն սկսեալ Բեթղեհէմը եղաւ նաեւ վանական կեանքի մեծ կեդրոններէն մին:

Սամարացիներուն ապստամբութեան ժամանակ (521 - 530) քանդուեցաւ Բեթղեհէմի եկեղեցին զոր շատ գեղեցկօրէն վերանորոգեց Յուստինիանոս կայսրը 531 ին: Իսկ Պարսից և Արաբներու յարձակումներուն ժամանակ անմլաս մնաց այս եկեղեցին:

Տեղւոյն եկեղեցիին այս համառօտ ակնարկէն յետոյ՝ յիշենք աւանդութիւնները: Եկեղեցին շինուած է Քրիստոսի Ս. Ծննդեան այրիւ վրայ, ուր է նաեւ մատուռը: Այս երկու նուիրական տեղերուն վրայ կը պատմուին հետեւեալ աւանդութիւնները. Յուստինոսի և Որոզինէսի բացատրութեանց նայելով՝ Բեթղեհէմը կ'երևի թէ բաւական հեռու է այրէն և ան հետզհետէ ընդարձակուելով կը մօտենար այրին: Եկեղեցւոյ այս երկու հայրերուն կողմէ այրին նկատմամբ տրուած վկայութիւնները պէտք է ընդունիլ թէ պատմական մեծ արժէք կը ներկայացնեն, և համոզում կը գոյացընենք թէ նոյն իսկ առաջին դարերէ սկսեալ տեղացի կամ եկուոր քրիստոնեաները կը պատուէին Փրկչին ծնած այրը ու ան առարկայ էր արդէն բարեպաշտական սովորութիւններու:

Յուստինոս 155 ին իր Տրամախօսութեան մէջ (78, 5) կը գրէ Բ. 1, յիշելէ յետոյ, «Եւ Մանուկը ծնաւ այն ատեն Բեթղեհէմի մէջ, որովհետեւ Յովսէփ չէր գիտեր թէ ո՛ւր պիտի բնակէր, Բեթղեհէմի մօտ այրի մը մէջ հաստատուեցաւ ու մինչ հոն կը գտնուէր Մարիամ ծնաւ Քրիստոսը եւ զբաւ զԱնիկա մտուրի մը մէջ,